ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվը	«ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/45»	«17» Հոկտեմբերի 2017թ.
2. Պայմանագրի կողմը	«Նոր Հաճընի Պոլիկլինիկա» ՊՓԲԸ (անվանումը)	
3. Պայմանագրի առարկան	Աշխատակիցների բժշկական զննության ծառայությունների մատուցում	
4. Պայմանագրի գումարը	1484000	
5. Պայմանագրի գործողության ժամկետը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 20 աշխատանքային օր	
6. Գնումների կատարման ծածկագիրը	ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/45	
7. Հայտերի բացման ամսաթիվը		

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Վարչական տնօրեն	Ա. Շուշյան	
2.	Գլխավոր հաշվապահ	Է. Նիկողոսյան	
3.	Աշխատանքի անվտանգության ապահովման և հուսալիության ծառայության պետ	Յու. Հովհաննիսյան	
4.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Հ. Մարգարյան	
5.	Գնումների համակարգող	Ռ. Ալբերտյան	

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-17/45

ք. Երևան 17 Դեկտեմբերի 2017թ.

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Նոր Հաճընի Պոլիկլինիկա» ՊՓԲ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Երանոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատուցել սույն պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված աշխատողների բժշկական զննության ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունը և վարձատրել դրա դիմաց՝ համաձայն Պայմանագրի N 2 հավելվածի:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Կատարողի կողմից սույն պայմանագրում նշված ժամկետի խախտման դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել Ծառայության մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.1.3 Չընդունել Ծառայությունը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

2.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայության մատուցումը կամ Ծառայությունը մատուցում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողի կողմից մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին

գ) Կատարողը խախտել է սույն պայմանագրում նախատեսված ժամկետը,

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ծառայությունը մատուցելիս՝ աջակցել Կատարողին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

2.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Ծառայության արդյունքը վատթարացնող շեղումներ կամ այլ

թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին.

2.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

2.2.4 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայության արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Կատարել մատուցվող Ծառայության վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

2.4.2 Ծառայության արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Ծառայության արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

2.4.3 Սույն պայմանագրում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայության մատուցման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Ծառայության մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրով նախատեսված տույժը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել պայմանագրով նախատեսված տուգանքը:

2.4.5 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ (Հավելված 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Ծառայության կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կատարողը պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

3.5 Ծառայությունն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումը ստուգում է մատուցված Ծառայության համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե մատուցված Ծառայությունը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

3.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 1484000 (մեկ միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամ: Կատարողը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

4.2 Ծառայության գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

4.4 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (N 2 Հավելվածով) նախատեսված չափերով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության որակի և սույն պայմանագրով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայությունը չընդունվելու, ինչպես նաև նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման

արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.9 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

7.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459
________________ Ռ. Խաչատրյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Նոր Հաճընի Պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Հասցեն՝ ք. Նոր Հաճըն, Տոռոզյան 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Նոր Հաճընի մ/ճ
Հ/Հ 1150009222090100
ՀՎՀՀ 03304362
________________ Ա. Երանոսյան
(ստորագրություն)

Հավելված N 1
«17» հոկ. 2017թ. կնքված
ԲԷՅ-ԳՀԾՁԲ-17/45 ծածկագրով պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

Չափ աբաժ ին հ/հ	Չափման միավոր մարդ քանակը	Կատարման վայրը	Գնման առարկայի հատկանիշները	Ընդհանուր գինը/ ՀՀ դրամ
1	2	3	4	5
1	57	ք.Սևան	127 Վ և բարձր լարվածությամբ գործող էլեկտրասարքավորումներ սպասարկող հերթապահ և աշխատանքներ կատարող անձնակազմին բժիշկ-մասնագետների կողմից (թերապևտ, նյարդաբան, ակնաբույժ, օտոլարինգոլոգ) բժշկական զննության անցկացում,տեսողության սրության և վեստիբուլյար ապարատի լաբարատոր ֆունկցիոնալ հետազոտությունների կատարում: Հիմք՝ ՀՀ կառավարության 15.07.2004թ. N 1089-Ն որոշումը.	199500
2	42	ք. Գյումրի		147000
3	33	ք. Գորիս		115500
4	34	ք. Կապան		119000
5	176	ք. Երևան		616000
6	23	ք. Արարատ		80500
7	59	ք.Վանաձոր		206500

Ստուգել և ախտորոշել ներքոնշյալ բշժկական հակացուցումները՝ ի լրումն ընդհանուր բշժկական ցուցումների համաձայն ՀՀ կառավարության 15.07.2004թ. N 1089 –Ն որոշման պահանջների 127 Վ և բարձր լարվածությամբ գործող էլեկտրասարքավորումներ սպասարկող և հերթապահ աշխատանքներ կատարող անձնակազմին բժիշկ-մասնագետների կողմից (թերապևտ,ակնաբույժ, նյարդաբան, օտոլարինգոլոգ) բժշկական զննության անցկացում, տեսողության սրության և վեստիբուլյար ապարատի լաբարատոր ֆունկցիոնալ հետազոտությունների կատարում:

1. Մեկ կամ երկկողմանի լսողության իջեցում՝ ցանկացած էթիոլոգիայի (շշուկով խոսակցությունը՝ 3 մ պակաս):
2. Տեսողության սրությունը՝ շտկմամբ՝ 0.5 Դ-ից ցածր՝ մեկ աչքում, 0.2 Դ-ից ցածր՝ մյուս աչքում:
3. Բուժման չենթարկվող կայուն արցունքահոսություն:
4. Տեսողական դաշտի սահմանափակում՝ ավելի քան 20 աստիճան:
5. Վեստիբուլյար ապարատի ֆունկցիայի խանգարում, այդ թվում՝ Մենյերի հիվանդություն:
6. Ալկոհոլիզմ, թմրամոլություն, թունամոլություն (անհատապես):
7. Աշխատանքներին խանգարող և օղակման հակում ունեցող ճողվածքներ, միջին ծանրության աշխատանքները խանգարող բարորակ ուռուցքներ:
8. Պերիֆերիկ նյարդային համակարգի քրոնիկ հիվանդություններ:
9. Աճախցանող էնդարտերիտ:
10. Երակների արտահայտված լայնացում,ստորին ծայրանդամների տրոմբոֆլեբիտ, թութք:
11. Բուժման չենթարկվող դակրիոցիստիտ և անբուժելի արցունքահոսություն:
12. Էպիլեպսիա և սինկոպալային վիճակներ:

Համաձայն ՀՀ կառավարության 15.07.2004թ. N 1089 –Ն որոշման պահանջների՝

ա) Բժշկական զննության ենթարկված յուրաքանչյուր անձին տալ վերջնակա եզրակացություն մասնագիտական պիտանելիության մասին՝ ելնելով նրա առողջական վիճակից՝ ուղեգրի առանձնացվող կտրոնով:

բ) Բժշկական զննության ամփոփ արդյունքները՝ եզրափակիչ ակտով 15 օրյա ժամկետում գրավոր ներկայացվում է կազմակերպություն:

Այլ պայմաններ

Մասնակիցն իր հրամանով ստեղծում է բժշկական զննություն անցկացնող հանձնաժողով, պատասխանատվություն է կրում նրա աշխատանքի որակի համար, կազմակերպում է լաբորատոր, գործիքային և ֆունկցիոնալ հետազոտությունների՝ անհրաժեշտ ծավալով և որակով կատարում:

Կատարման վայրը	Ըստ վերը նշված քաղաքների
Ծառայության մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրից	Մինչև 20 աշխատանքային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Վանպաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ռ. Խաչատրյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

«Նոր Հաճընի Պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Հասցեն՝ ք. Նոր Հաճն, Տոռոզյան 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Նոր Հաճընի մ/ճ
Հ/Հ 1150009222090100
ՀՎՀՀ 03304362

Ա. Երանոսյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«17» հուլ. 2017թ. կնքված
ԲԷՅ-ԳՀԾՁԲ-17/45 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երկկողմ ստորագրված հաշիվ ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշվված 30 աշխատանքային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Երևան» մ/ճ
Հ/Հ 1150001726 30300
ՀՎՀՀ 01522459

_____ Ռ. Խաչատրյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Նոր Հաճընի Պոլիկլինիկա» ՊՓԲԸ
Հասցեն՝ ք. Նոր Հաճըն, Տոռոզյան 4
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ Նոր Հաճընի մ/ճ
Հ/Հ 1150009222090100
ՀՎՀՀ 03304362

_____ Ա. Երանոսյան
(ստորագրություն)

Հավելված թիվ 3
_____20 թ.
Ծառայությունների մատուցման
թիվ ԲԷՅ-ԳՀԾՁԲ-17/45 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
պարոն Արթուր Բաղդասարյանին
պատասխանատու ստորաբաժանման
ղեկավար Յուրի Հովհաննիսյանից

Հեկուցագիր

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 2017թ. գնման պլանով նախատեսված Ընկերության աշխատողների բժշկական զննության ծառայության գնման նպատակով խնդրում եմ Ձեր թույտվությունը համապատասխան ծառայությանը:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝
ԱԱԱ և Հ ծառայության պետ Յուրի Հովհաննիսյան

III. Հայտի գնահատում և գնման ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Գևորգյան)

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից լրացված «Մասնակցի գնահատման» թերթիկները, հանձնաժողովը որոշեց՝

1. «Նոր Հաճընի Պոլիկլինիկա» ՊՓԲԸ -ին համարել որպես գնման ընթացակարգի ընտրված մասնակից բոլոր 7 չափաբաժինների համար :
2. Արդյունքների մասին սահմանված կարգով ծանուցել մասնակիցներին և հրապարակել հայտարարություն ՀՀ Ֆինանսների նախարարության կայքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

Հարություն Գևորգյան

Յուրի Հովհաննիսյան

Արման Օհանյան

Ռոմեո Ալբերտյան